ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ–
ԾՐԱԳԻՐ 2

ՎԱՐԿ ԹԻՎ 2729-ARM

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# ԵՎ
# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2014թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ..... 3
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 4
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 6
ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 7
ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 8
ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ..... 9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 10
ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ..... 16

## ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Կառավարման խորհրդի նախագահ**

| | |
|---|---|
| Հովիկ Աբրահամյան | ՀՀ վարչապետ |

**Կառավարման խորհրդի անդամներ**

| | |
|---|---|
| Գագիկ Բեգլարյան | ՀՀ Տրանսպորտի և կապի նախարար |
| Երվանդ Զախարյան | ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարար |
| Գագիկ Խաչատրյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Հովհաննես Մանուկյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Կարեն Ճշմարիտյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Տարոն Մարգարյան | Երևանի քաղաքապետ |
| Կամո Արեյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Վահե Նիկոյան | Երևանի քաղաքապետի տեղակալ |
| Ներսես Երիցյան | ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ |
| Արթուր Առաքելյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ |
| Աշոտ Մուսայան | ՀՀ կառավարությանն առընթեր աճշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ |
| Արթուր Սարգսյան | «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն |
| Նորա Մարտիրոսյան | “Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականցման գրասենյակ” ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, ծրագրերի ղեկավար |

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 70

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր - Ծրագիր 2-ի 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ*

Ներկայացվում է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության (Կազմակերպություն) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է Ասիական Զարգացման Բանկի 2729-ARM վարկային համաձայնագրով ֆինանսավորվող "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի–Ծրագիր 2"-ի (Ծրագիր) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվությունը, ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվությունը, վարկային միջոցների մասհանման հաշվետվությունը, ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մենք պատասխանատու ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա ձևված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարվեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ կազմակերպության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու, համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով.

1. Ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա Ծրագրի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի և Ասիական Զարգացման Բանկի կողմից հրապարակված "Փոխառուների Ձեռնարկ՝ Ֆինանսական կառավարում և Ծրագրերի Վերլուծություն"-ի:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև կնքված 2729-ARM "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 2 (հատուկ գործողություններ)" վարկային Համաձայնագրում նշված նպատակներին համապատասխան, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. 2729-ARM վարկային Համաձայնագրում սահմանված հատուկ պարտավորությունները պահպանվել են:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
30 հունիսի, 2015թ.

Մանվել Վարդանյան
Տնօրեն

Գևել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

# ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱՁԲ վարկ թիվ 2729-ARM*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*

| | ծնթ. | Հաշվետու տարի 2014թ. USD | Կուտակային առ 31.12.2014թ. USD |
|---|---|---|---|
| **Ֆինանսավորում** | | | |
| ԱՁԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում | 3 | 18,633,867 | 38,965,647 |
| Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորում | | 2,139,579 | 3,336,354 |
| **Ընդամենը ֆինանսավորում** | | **20,773,446** | **42,302,001** |
| **Ծախսումներ** | 5 | | |
| Աշխատանքներ | | 17,634,220 | 35,583,772 |
| Խորհրդատվական ծառայություններ | | 685,226 | 2,494,463 |
| Տոկոսագումար | | 327,886 | 900,878 |
| Հարկեր, տուրքեր | | 2,140,819 | 3,031,809 |
| **Ընդամենը ծախսումներ** | | **20,788,151** | **42,010,922** |
| Այլ մուտքեր/(ելքեր) | 6 | 49,232 | (250,588) |
| Փոխարժեքային կորուստ | | (33,184) | (38,344) |
| **Դրամական միջոցների զուտ աճ** | | **1,343** | **2,147** |
| Դրամական միջոցների սկզբնական մնացորդ | | 804 | - |
| **Դրամական միջոցների վերջնական մնացորդ** | 4 | **2,147** | **2,147** |

*Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարության կողմից 2015թ. հունիսի 30-ին: Կից ծանոթագրությունները ծրագրի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասն են:*

**Արթուր Սարգսյան**
Գլխավոր գործադիր տնօրեն

**Սերգեյ Մելիք-Յոլչյան**
Ֆինանսատնտեսական ղեկավար / գլխավոր հաշվապահ

## ԸՍՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Հիմնական բաղադրիչներ | Ծախսումներ | | Ֆինանսավորման աղբյուրը | | | Ֆինանսավորման աղբյուրը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսավորում | Այլ (ծնթ. 7) | ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM | ՀՀ ֆինանսավորում | Այլ (ծնթ. 7) |
| | Հաշվետու տարի 2014թ. | Կուտակային առ 31.12.2014թ. | Հաշվետու տարի 2014թ. | | | Կուտակային առ 31.12.2014թ. | | |
| Աշտարակ-Թալին 41.3 կմ երկշարք ճանապարհի վերակառուցում և լայնացում քառաշերտի | 19,054,099 | 37,349,705 | 17,634,220 | 1,419,879 | - | 35,583,772 | 1,765,933 | - |
| Խորհրդատվական ծառայություններ և ծրագրի կառավարում | 1,406,166 | 3,760,339 | 671,761 | 718,196 | 16,209 | 2,480,997 | 1,263,133 | 16,209 |
| Տոկոսագումար | 327,886 | 900,878 | 327,886 | - | - | 900,878 | - | - |
| **Ընդամենը** | **20,788,151** | **42,010,922** | **18,633,867** | **2,138,075** | **16,209** | **38,965,647** | **3,029,066** | **16,209** |

# ՎԱՐԿԱՅԻՆ ՍԻՋՈՑՆԵՐԻ ՍԱՍՀԱՆՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱՋԲ վարկ թիվ 2729-ARM*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Դիմումի համար | Ծախսային հոդվածներ | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Շինարարական աշխատանքներ | Խորհրդատվական ծառայություններ | Տոկոսագումար | |
| | 1 | 2 | 3 | |
| 6DP | 70,761.22 | - | | 70,761.22 |
| 7DP | 596,986.48 | - | - | 596,986.48 |
| 8DP | 3,939,116.06 | - | - | 3,939,116.06 |
| 9DP | 896,873.00 | - | - | 896,873.00 |
| 12DP | 5,037,381.84 | - | - | 5,037,381.84 |
| 13DP | - | 13,536.21 | - | 13,536.21 |
| 14DP | 3,478,307.92 | - | - | 3,478,307.92 |
| 15DP | 2,400,000.00 | - | - | 2,400,000.00 |
| 16DP | 1,214,793.52 | - | - | 1,214,793.52 |
| 17DP | - | 658,225.12 | - | 658,225.12 |
| | - | - | 165,625.30 | 165,625.30 |
| | - | - | 162,260.81 | 162,260.81 |
| | 17,634,220.04 | 671,761.33 | 327,886.11 | **18,633,867.48** |

## ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱՋԲ վարկ թիվ 2729-ARM*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Հոդվածներ | Փաստացի | | Նախատեսված | | Շեղում | |
|---|---|---|---|---|---|---|
| | Հաշվետու տարի | Ամողական առ | Հաշվետու տարի | Ամողական առ | Հաշվետու տարի | Ամողական առ |
| | 2014թ. | 31.12.2014թ. | 2014թ. | 31.12.2014թ. | 2014թ. | 31.12.2014թ. |
| Աշխատանքներ | 17,634,220 | 35,583,772 | 25,975,224 | 91,096,178 | (8,341,004) | (55,512,406) |
| Խորհրդատվական ծառայություններ | 685,226 | 2,494,463 | 1,158,159 | 4,557,859 | (472,933) | (2,063,396) |
| Տոկոսագումար | 327,886 | 900,878 | 327,886 | 900,878 | - | - |
| Այլ (հարկեր) | 2,140,819 | 3,031,809 | 3,787,089 | 11,262,133 | (1,646,270) | (8,230,324) |
| **Ընդամենը** | **20,788,151** | **42,010,922** | **31,248,358** | **107,817,048** | **(10,460,207)** | **(65,806,126)** |

## 1. Ընդհանուր տեղեկություններ

### 1.1. Ծրագրի ֆինանսավորումը

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) միջև 2009թ. սեպտեմբերի 15-ին ստորագրված Շրջանակային ֆինանսավորման համաձայնագրով ԱԶԲ-ն համաձայնել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությանը տրամադրել բազմափուլ (բազմատրանշային) վարկավորում՝ 500 միլիոն դոլար ընդհանուր գումարով:

ԱԶԲ-ն Բազմափուլ Ֆինանսական Գործիքի (ԲՖԳ) ներքո վարկերը տրամադրում է ըստ առանձին ծրագրերի՝ տրանշերի, երբ վերջիններս պատրաստ կլինեն ֆինանսավորման համար՝ համաձայնագրով սահմանված պահանջների բավարարման դեպքում: Յուրաքանչյուր վարկ հանդիսանում է առանձին տրանշ: Տրանշերը կարող են ունենալ տարբերվող ֆինանսավորման պայմաններ, տրամադրվել միաժամանակ կամ հաջորդաբար:

Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2011թ. մայիսի 30-ին ստորագրված "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 2 (հատուկ գործողություններ)" (այսուհետև՝ Ծրագիր) վարկային համաձայնագրի համաձայն՝ ԱԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել 170,000,000 ԱՄՆ դոլար գումարով 2729-ARM վարկը: Վարկը տրամադրվել է իրականացնելու երկրորդ տրանշի ֆինանսավորումը:

Համաֆինանսավորումը տրամադրում է Հայաստանի Հանրապետությունը պետական բյուջեի միջոցներից: Համաֆինանսավորումը տրամադրվում է ֆինանսավորելու ՀՀ օրենքներով պահանջվող հարկերը և տուրքերը:

Վարկի տրամադրման վերջնաժամկետ է սահմանվել 2017թ. հունիսի 30-ը:

### 1.2. Ծրագրի նպատակները

2729-ARM վարկային համաձայնագրով իրականացվող Ծրագրի նպատակներն են.

- Միջշրջանային ճանապարհային տրանսպորտի տրանզիտի հեշտացում,
- առևտրային հոսքերի և մրցակցայնության մեծացում,
- տրանսպորտի ծախսերի նվազեցում,
- շուկաների, աշխատանքների և սոցիալական ծառայությունների մոբիլություն և հասանելիություն,
- կառավարման բարելավում:

Ծրագրի բաղադրիչներն են.

- Աշտարակ-Թալին 41.3 կմ երկշարք ճանապարհի վերակառուցում և լայնացում քառաշերտի;
- Խորհրդատվական ծառայություններ և ծրագրի կառավարում ներառյալ ուսումնասիրությունների նախապատրաստում և Ներդրումային Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող հետագա ծրագրերի մանրամասն նախագծում, շինարարական աշխատանքների վերահսկողություն, մրցութային փաստաթղթերի պատրաստում, գնումների իրականացում և կարողությունների զարգացում:

### 1.3. Ծրագրի բյուջեն

Ծրագրի բյուջեն կազմում է 210,000,000 ԱՄՆ դոլար (USD) գումար:

| Կատեգորիա | ԱՁԲ Վարկ 2729-ARM | Հայաստանի Հանրապե-տություն | Ընդամենը |
|---|---|---|---|
| | USD | USD | USD |
| Աշխատանքներ | 149,700,000 | - | 149,700,000 |
| Խորհրդատվական ծառայություններ | 7,000,000 | - | 7,000,000 |
| Տոկոսագումար | 10,000,000 | - | 10,000,000 |
| Այլ (ներառյալ տեղական հարկեր) | - | 32,000,000 | 32,000,000 |
| Չբաշխված | 3,300,000 | 8,000,000 | 11,300,000 |
| **Ընդամենը** | **170,000,000** | **40,000,000** | **210,000,000** |

### 1.4. Ծրագիրն իրականացնող հաստատություն

Ծրագիրը իրականացվում է "Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն" պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից (Կազմակերպություն), որը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թ. մարտի 11-ի N 446-Ն որոշումով: Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որի կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմինը Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունն է:
Կազմակերպության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Պուշկինի փողոց 58:

### 1.5. Հողերի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիր (ՀՕՏԾ)

Ծրագրի իրականացման համար պահանջվում է խիստ ազդեցության ենթարկված անձերի հողի օտարում և տարաբնակեցում: ՀՀ Կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի թիվ 1139-Ն որոշմամբ հաստատվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 2 (Աշտարակ-Թալին) ճանապարհահատվածի հողի օտարման և տարաբնակեցման ծրագիրը:
ՀՕՏԾ-ն ամբողջությամբ ֆինանսավորվում է ՀՀ Կառավարության միջոցներից: ՀՕՏԾ-ի արժեքը սահմանվել էր 2,304,485 հազար ՀՀ դրամ: 2012թ. ՀՀ Կառավարության կողմից գումարն ամբողջությամբ տրամադրվել է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրերի իրականացման կազմակերպությանը: ՀՀ Կառավարության 12.06.2014թ.-ի թիվ 603-Ն որոշմամբ, ՀՕՏԾ-ի ֆինանսավորման համար 21.07.2014թ.-ին լրացուցիչ հատկացվել է 958,826 հազար դրամ գումար:
2014թ.-ին ՀՕՏԾ-ի գծով ծախսումները կազմել են 1,822,101 հազար դրամ (2013թ.-ին՝ 1,133,083 հազար դրամ):

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

### *2.1 Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի համաձայն և ներկայացված են Ասիական Զարգացման Բանկի 2006թ. դեկտեմբերին հրապարակված "Փոխառուների Ձեռնարկ՝ Ֆինանսական կառավարում և Ծրագրերի Վերլուծություն"-ին համապատասխան:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են.
- դրամական միջոցների ստացումների և ծախսումների հաշվետվություն,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման հաշվետվություն,
- վարկային միջոցների մասհանման հաշվետվություն,
- ծրագրի ծախսումների կուտակային հաշվետվություն,
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ՝ ներառող.
  - հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը,
  - այլ ծանոթագրություններ:

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

### *2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել և ներկայացվել են կիրառելով հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքը:
Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառման դեպքում գործարքները և այլ դեպքերը ճանաչվում են միայն այն դեպքում, երբ դրամական միջոցը կամ համարժեքը ստացվել է կամ վճարվել:
Դրամարկղային հիմունքով պատրաստված ֆինանսական հաշվետվությունները տրամադրում են տեղեկատվություն ժամանակաշրջանում ստացված դրամական միջոցների, դրամական միջոցների օգտագործման ուղղությունների և հաշվետու ամսաթվի դրությամբ դրամական միջոցների մնացորդների վերաբերյալ:

### *2.3 Ներկայացման արժույթը*

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

### *2.4 Գործարքներ արտարժույթով*

Արտարժույթը դա Ծրագրի ներկայացման արժույթից տարբերվող արժույթն է:
Ծրագրի բանկային հաշիվները վարվում են և գործարքները իրականացվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված Հայաստանի Հանրապետության հատկացումները և դրանց հաշվին կատարված ծախսումները ներկայացվում են ԱՄՆ դոլարով՝ կիրառելով ստացման կամ ծախսման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված հաշվարկային փոխարժեքը,

2014թ. համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված պաշտոնական փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 405.26 դրամ (2013թ.՝ 1 ԱՄՆ դոլար =405.26 դրամ):
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքն է՝ 1 ԱՄՆ դոլար = 474.97 դրամ (31.12.2013՝ 1 ԱՄՆ դոլար = 405.64 դրամ):

### *2.5 Դրամական միջոցներ*

Դրամական միջոցները բաղկացած են բանկային հաշիվների մնացորդներից:

### *2.6 Ծրագրի ֆինանսավորում*

Ծրագրի ֆինանսավորումը ԱՁԲ 2729-ARM վարկի միջոցներից՝ 170,000,000 USD ընդհանուր գումարով, կատարվում է 100% չափով վարկային համաձայնագրով սահմանված բոլոր ծախսային հոդվածների նկատմամբ:

Վարկային միջոցներից Հայաստանի Հանրապետության հարկային օրենքներով պահանջվող հարկեր և տուրքեր չեն վճարվում: Վերջիններս կատարվում են Հայաստանի Հանրապետության համաֆինանսավորման հաշվին:

### *2.7 Հարկեր*

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության ընդհանուր կարգով:

## 3. ԱՁԲ 2729-ARM վարկի ֆինանսավորում

| | **Հաշվետու տարի 2014թ. USD** | **Ամողական առ 31.12.2014թ. USD** |
|---|---|---|
| Ուղղակի վճարում | 18,305,981 | 38,064,769 |
| Տոկոսագումարի առհանում | 327,886 | 900,878 |
| **Ընդամենը** | **18,633,867** | **38,965,647** |

## 4. Դրամական միջոցներ

| | **31.12.2014թ. USD** | **31.12.2013թ. USD** |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվ, ՀՀ համաֆինանսավորում, ՀՀ դրամ | 2,147 | 804 |
| **Ընդամենը** | **2,147** | **804** |

## 5. Ծրագրի իրականացման առաջընթաց

| Ծախսային հոդվածներ | 31.12.2014թ. դրությամբ USD | Բյուջե USD | Կատարում % |
|---|---|---|---|
| Աշխատանքներ | 35,583,772 | 149,700,000 | 23.8 |
| Խորհրդատվական ծառայություններ | 2,494,463 | 7,000,000 | 35.6 |
| Տոկոսագումար | 900,878 | 10,000,000 | 9.0 |
| Այլ (ներառյալ տեղական հարկեր) | 3,031,809 | 32,000,000 | 9.5 |
| Չբաշխված | - | 11,300,000 | - |
| **Ընդամենը** | **42,010,922** | **210,000,000** | **20.0** |

## 6. Այլ մուտքեր/(ելքեր)

| | 31.12.2014թ. դրությամբ USD |
|---|---|
| ***Տրանշ 1-ին ժամանակավորապես տրամադրված/ (ստացված)*** | |
| ՀՀ համաֆինանսավորման հաշվից (2012թ.-ին) | (299,820) |
| ԱԶԲ վարկ թիվ 2561-ARM(SF) հաշվից (2014թ.-ին) | 13,465 |
| ՀՀ համաֆինանսավորման հաշվից(2014թ.-ին) | 2,744 |
| | *(283,611)* |
| Այլ | 33,023 |
| | (250,588) |

## 7. Կանխավճարներ և կրեդիտորական պարտքեր

Տեղեկատվության նպատակով ներքո ներկայացվում է հաշվետու ամսաթվի դրությամբ չմարված կանխավճարները և կրեդիտորական պարտքերը

| **Կանխավճարներ** | **31.12.2014թ.** USD | **31.12.2013թ.** USD |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների գծով* | 26,933,577 | 17,116,153 |
| Խորհրդատվության գծով | 46,239 | 718,355 |
| **Ընդամենը** | **26,979,816** | **17,834,508** |

| **Կրեդիտորական պարտքեր** | **31.12.2014թ.** USD | **31.12.2013թ.** USD |
|---|---|---|
| Շինարարական աշխատանքների գծով | - | 84,913 |
| Հետերաշխիքային գումարներ | 1,153,359 | 240,138 |
| Խորհրդատվության գծով | - | 16,450 |
| **Ընդամենը** | **1,153,359** | **101,363** |

(*) Շինարարական աշխատանքների գծով պայմանագրի համաձայն կանխավճարները ենթակա են մարման աշխատանքների ամողական գումարի 30%-ի կատարմանը հաջորդող կատարողական ակտերի վճարման ենթակա գումարներից: Չնայած հաշվատու ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքները փաստացի կազմում են շուրջ 17 մլն ԱՄՆ դոլար, կատարողական ակտերով ընկերության կողմից ընդունվել են շուրջ 12 մլն ԱՄՆ դոլարի աշխատանքներ: Այդ պատճառով, հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ կանխավճարներից դեռևս մարումներ չեն կատարվել:

## 8. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

29.04.2015թ. ԱԶՔ-ին ներկայացվել է N 16 Ուղիղ վճարման հայտը 4,166,784 ԱՄՆ դոլար գումարով, որը հաստատվել է 29.05.2015թ.-ին:

## 9. Դատական հայցեր

Հաշվետու ամսաթվի և այս ֆինանսական հաշվետվության հաստատման ամսաթվի դրությամբ Ծրագրի դեմ ներկայացված դատական հայցեր չկան:

## ՀԱՎԵԼՎԱԾ. ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԸՍՏ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

*Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2*
*ԱԶԲ վարկ թիվ 2729-ARM*
*2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ*
*ԱՄՆ դոլար*

| Նկարագրություն | Վճարված գումար | Պայմանագրի անվանում |
|---|---|---|
| | | |
| **Աշխատանքներ** | | |
| Շինարարական աշխատանքներ | 17,634,220 | T1-T2 CW-01 շինարարական պայմանագիր՝ 27.04.2012 թ. |
| ***Ընդամենը շինարարական աշխատանքներ*** | ***17,634,220*** | |
| **Խորհրդատվական ծառայություններ** | | |
| Ծրագրի կառավարման խորհրդատու | 685,226 | Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 18.05.2012թ. |
| ***Ընդամենը խորհրդատվական ծառայություններ*** | ***685,226*** | |
| | | |
| **Ընդամենը Ծախսումներ ԱԶԲ միջոցներից** | **18,649,049** | |
| | | |
| **Հարկեր** | | |
| Շինարարական աշխատանքներ | 1,419,879 | T1-T2 CW-01 շինարարական պայմանագիր՝ 27.04.2012 թ. |
| Ծրագրի կառավարման խորհրդատու | 720,940 | Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր՝ 18.05.2012թ. |
| | | |
| | | |
| | | |
| **Ընդամենը Ծախսումներ համաֆինանսավորման միջոցներից** | **2,140,819** | |
| | | |